



## Պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր

### ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

#### Պահառության ծառայությունների մատուցման.

ք. Երևան

-----20--թ.

“Մելլաթ Բանկ” ՓԲԸ-ն(այսուհետև Պահառու)՝ ի դեմս գործադիր տնօրեն Սեյեդ Ղուլամոեզա Մուսավիի մի կողմից, և ----- (այսուհետև Հաճախորդ) ի դեմս -----  
----- մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

#### 1.Պայմանագրի Առարկան

1.1.Սույն պայմանագրով Պահառուն Հաճախորդին տրամադրում է՝

Հաճախորդի արժեթղթերի հաշվի բացման և վարման ինչպես նաև բացված հաշիվներով գործառնությունների կատարման միջոցով Հաճախորդի արժեթղթերով հավաստվող իրավունքների հաշվառման, արժեթղթերի փոխանցումների հաշվառման և հաստատման ծառայություններ.

Հաճախորդի հանձնարարությամբ՝ պահառուական գործառնություններին առնչվող այլ ծառայություններ.

1.2.Պահառուն, համաձայն ՀՀ օրենսդրության և նորմատիվ ակտերի, ինչպես նաև սույն պայմանագրի, Հաճախորդի համար բացում է դեպո հաշիվ h----- և իրականացնում հաշվի սպասարկում :

1.3.Սույն պայմանագրի կնքմամբ Հաճախորդից չի պահանջվում արժեթղթերի անհապաղ մուտքագրում արժեթղթերի հաշվին:

1.4.Սույն պայմանագրի կնքումը չի ենթադրում արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում Հաճախորդից Պահառուին:

#### 2. Արժեթղթերի հաշվի բացման և վարման կարգը

2.1 Արժեթղթերի հաշիվը բացվում է միայն Պահառուի մոտ Հաճախորդի բանկային հաշվի առկայության դեպքում:

2.2 Արժեթղթերի հաշվով գործառնությունները կատարվում են Պահառուի կողմից հաստատված հանձնարարականների և գործառնության կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրման միջոցով:

2.3 Պահառուն պահառուական գործառնությունները կատարում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Կատարված գործառնությունների մասին Պահառուն Հաճախորդին է տրամադրում հաշվետվություններ և քաղվածքներ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

#### 3.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

##### Պահառուն իրավունք ունի

3.1 Բանկի կողմից սահմանված սակագներով Հաճախորդից գանձել պահառության ծառայությունների մատուցման դիմաց վճարումներ:

3.2 Չնդունել Հաճախորդի հանձնարարականները ի կատարում դրանք ժամկետից ուշ ներկայացնելու կամ սխալ ձևակերպելու դեպքում: Կամ եթե ապահովված չէ գործարքի համար անհրաժեշտ գումարը կամ արժեթղթերը Հաճախորդի հաշվում :

##### 3.1Պահառուն պարտավորվում է.

3.1.1 Հաճախորդի համար բացել դեպո հաշիվ, որը չի հանդիսանում առևտրային գաղտնիք և պարտադիր պետք է նշվի արժեթղթերի հետ կատարվող գործարքներում և բոլոր հաշվարկային փաստաթղթերում:

3.1.2 Հաճախորդի դեպո հաշվում առկա արժեթղթերը չօգտագործել այլ նպատակներով:

3.1.3Հաճախորդի հայտերով ձեռք բերված արժեթղթերը փոխանցել Հաճախորդի դեպո հաշվին մեկ բանկային օրվա ընթացքում:



## Պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր

3.1.4. Հաճախորդի կողմից մինչև ժամը 14:00 ներկայացված դեպո հանձնարարականները կատարել նույն աշխատանքային օրը:

3.1.5 Հաճախորդի ամեն կատարված գործարքից հետո նրան տրամադրել դեպո հաշվի քաղվածք և տեղեկանք մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.6. Հաճախորդի ամսեկան կտրվածքով տրամադրել իր դեպո հաշվից քաղվածք յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

3.1.7 Երեք օրվա ընթացքում Հաճախորդի ներկայացված դեպո հաշվի քաղվածքի կամ կատարված գործառնությունների մասին տեղեկանքի վերաբերյալ գրավոր առարկություններ չլինելու դեպքում դեպո հաշվի քաղվածքը կամ տեղեկանքը Պահառուի կողմից համարվում է ընդունված, իսկ գործարքը պատշաճորեն կատարված:

3.1.8. Հաճախորդի հայտով առաջնային աճուրդներին ձեռք բերված պարտատոմսերի մուտքագրումը, պարտատոմսերի մարումների իրականացումը, զեղջատկոսի, արժեկտրոնային եկամտի վճարումը, պարտատոմսերի առք և վաճառքի գործարքների իրականացումը երկրորդային շուկայում, գրավադրումը Հաճախորդի հաշիվներին կատարվում է փաստացի կատարման օրվանից մեկ բանկային օրվա ընթացքում:

3.1.9 Ապահովել արժեթղթերի հաշիվների մասին տեղեկատվության գաղտնիությունը, ներառյալ հաշիվներով իրականացրած գործառնությունների մասին և պահառության գործունեության իրականացման արդյունքում հայտնի դարձած այլ տեղեկությունները, ինչպես նաև չօգտագործել այդ տեղեկությունն այնպիսի նպատակներով, որոնք կարող են Հաճախորդին վնաս պատճառել:

### 3.2 Հաճախորդը իրավունք ունի

3.2.1 Իրականացնել արժեթղթերով ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործառնություն:

3.2.2 Պահանջել համապատասխան քաղվածք իր հաշվից՝ կատարված գործարքների վերաբերյալ:

3.2.3 Առանց առք ու վաճառքի գործարքի իրականացման մեկ Ենթաավանդատան իր դեպո հաշվից արժեթղթերը փոխանցել այլ Ենթաավանդատան իր դեպո հաշվին, ներկայացնելով համապատասխան հանձնարարական:

3.2.4 Միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը Պահառուին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով:

### 3.3 Հաճախորդը պարտավոր է

3.3.1 Պահառուին տրամադրել արժեթղթերի հաշվի բացման և դրա հետագա վարման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

3.3.2. Պահպանել ՀՀ օրենսդրությամբ, կարգերով և սույն պայմանագրով սահմանված պահանջները:

3.3.3 Պահառուին տեղեկացնել հիմնադիր փաստաթղթերի կամ վավերապայմանների փոփոխությունների մասին:

3.3.4 Սույն պայմանագրով, սահմանված կարգերով և ժամկետներում կատարել Պահառուի ծառայությունների դիմաց վճարումները:

3.3.5 Չննել Պահառուի կողմից տրված քաղվածքները և դրանցում թերություններ կամ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Պահառուին:

### 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով և կանոնակարգերով սահմանված իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության համապատասխան:

4.2 Հաճախորդը պատասխանատու է Պահառուին ներկայացվող տեղեկատվության ժամանակին և ճիշտ լինելու համար:



## Պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր

4.3 Պահառուն պարտավոր է փոխհատուցել Հաճախորդի վնասները ,որոնք առաջացել են Պահառուի կողմից արժեթղթերի պահպանման պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում,ներառյալ արժեթղթերի հաշվում գրառումների կորստյան և սույն պայմանագրով նախատեսված այլ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերի ,եթե չապացուցվի,որ վնասները ծագել անանհաղթահարելի ուժի առկայության կամ Հաճախորդի դիտավորության կամ անզգուշության հետևանքով:

4.4 Պահառուն պատասխանատվություն չի կրում Հաճախորդի ներկայացրած հանձնարարականների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,եթե դա տեղի է ունեցել փաստաթղթերի սխալ ձևակերպման ,հանձնարարականների տեքստում սխալների,անճշտությունների առկայության, ինչպես նաև Պահառուից անկախ այլ պատճառների հետևանքով:

4.5 Պահառուն պատասխանատվություն չի կրում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրավապահ մարմինների կողմից արժեթղթերի վրա կալանք դնելու և դրանց բռնագանձման հետևանքով ծագած վնասի համար:

### 5.Ծառայությունների վճարման կարգը

5.1.Պահառուի կողմից սույն պայմանագրի հիման վրա Հաճախորդին մատուցված ծառայությունների դիմաց Հաճախորդը վճարում է ծառայությունների մատուցման պահին գործող Սակագներին համապատասխան:

5.2.Սակագներով նախատեսված վճարները Պահառուի կողմից գանձվում են Հաճախորդի դրամային հաշվից: Սակայն տվյալ հաշվին համապատասխան միջոցների բացակայության դեպքում Պահառուի գանձվելիք գումարը գանձվում է Հաճախորդի արտարժույթային հաշիվներից` գանձման պահին Բանկի կողմից սահմանված արտարժույթի գնման փոխարժեքով:

## 6. ԱՆՀԱՂԹՍԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

### ( \$ՈՐՄ- ՄՍԺՈՐ )

6.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն անբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից,եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Սույն պայմանագրի առումով անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավճակներին են դասվում տարերային աղետները,վթարները, հրդեհները,զանգվածային անկարգությունները,գործադուլները ,ռազմական գործողությունները, կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

## 7.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և անժամկետ է:

7.2 Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ` մյուս կողմին այդ մասին գրավոր տեղեկացնելու պայմանով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր դրույթների պահանջով այն դադարեցնելը : Կողմերը պարտավոր են նախապես 10 օր առաջ տեղյակ պահել հակառակ կողմին սույն պայմանագիրը դադարեցնելու մասին: Ընդ որում` Կողմերը պարտավորվում են նշված ժամկետի ընթացքում իրականացնել սույն Պայմանագրով սահմանված պարտականությունները:

7.3 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում միայն կողմերի միջև կնքված լինելու դեպքում:

7.4 Հաճախորդի նախաձեռնությամբ կամ Պահառուից անկախ այլ պատճառներով սույն Պայմանագրի լուծման դեպքում Պահառուի կողմից Հաճախորդի արժեթղթերի վերագրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Հաճախորդը:



## Պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր

Պահառուի նախաձեռնությամբ սույն Պայմանագրի լուծման դեպքում Պահառուի կողմից Հաճախորդի արժեթղթերի վերագրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Պահառուն:

### 8. Վեճերի լուծման կարգը.

8.1 Վեճերի լուծումը ներկա պայմանագրով կատարվում է կամ բանակցությունների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով :

8.2 Ներկա պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ լրիվ կատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում համաձայն գործող օրենսդրության և սույն պայմանագրի :

### 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում միայն կողմերի միջև կնքված լինելու դեպքում:

9.2 Սույն պայմանագիրը կազմված է երկու իրավահավասար օրինակներից` յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

### 10. Կողմերի իրավաբանական հասցեները.

Պահառու`

Հաճախորդ`

“Մեյլաթ Բանկ” Փ.Բ.Ը

ք. Երևան, Թումանյան 5ա, 45 տարածք

Տնօրեն`

Կ.Տ.

Կ.Տ.